

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՈՆԱՅՈՒՅՑԻ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Ալինա Կիրակոսյան

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

ՀՀ, Երևան, Չարենցի 15

Էլ. հասցե՝ alinokkirakosyan@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 27.02.2022, գրախոսվել է 28.02.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-375

Ներածություն

Ցորենի հետ կապված երկրագործական և արտադրական տարբեր գործընթացները բավական մանրամասն քննության են ենթարկվել հայ ազգագրության տեսանկյունից, մասնավորապես Վ. Բդոյանի աշխատություններում: Իսկ Ա. Օդաբաշյանն ու Ս. Հարությունյանը համապատասխանաբար անդրադարձել են այս հացաբույսին առնչվող Ամանորի ծիսական փնջին և հանելուկաշարին:

Նշանաբանական (սեմիոտիկ) վերլուծության մեթոդով (Ա. Լոսև, Յու. Լոտման, Կ. Յունգ, Ռ. Բարտ, Մ. Բախտին, Յու. Կրիստևա) փորձել ենք վերհանել և դասակարգել մարդու երկրագործական գործունեության ընթացքում հացի հետ կապված ծիսախորհրդանշանային դրսևորումները, որոնք իրենց արտահայտությունն են գտել բանահյուսական տպագիր համահավաք ժողովածուներում, ինչպես նաև մեր հավաքած դաշտային նյութերում՝ գրառված գյուղական բնակչության շրջանում (Կոտայքի և Արարատի մարզերում 2017-2018 թթ.):

Քննության ենք առել երկրագործական տոնացույցի անընդմեջ շղթայում (ցանքի նախապատրաստում, կատարում, խնամք, բնական աղետներից, վնասատուներից պաշտպանվելու գործողություններ, բերքահավաք, հացահատիկի վերամշակում, հացաթխում և բերքի տոն) հացի բացարձակ գերակայությամբ ուղեկցվող ծիսական բանահյուսությունը:

Հաց, ծես, խորհրդանիշ

Հացն ունի երկնային ծագում¹, ինչը տեսանելի է երկրագործական տարեպտույտի շղթայում կենցաղավարող ժողովրդական հավատալիքներում, ծիսական գործողություններում և բանահյուսական նյութերում: Հացի խորհրդանշակարգում, ընդհանուր առմամբ, կարևորվում է ծեսը: Կարգը

¹ Շունը երկինք նայելով՝ քաղցից այնքան է ոռնացել, որ նրա շնորհիվ է աշխարհ եկել հացը (Ղանալանյան 1969, 403):

ծես բառի հոմանիշներից է և նշանակում է դասավորություն, քառսից անցում դեպի կարգունկնոն, հարակարգություն, արարողություն², իսկ բանավոր ավանդության մեջ հացի սրբազան ու գաղտնախորհուրդ զոհաբերությունը համընկնում է արարման առասպելին:

Մ. Բախտինի կարծիքով՝ յուրաքանչյուր տեքստ հենվում է իրեն նախորդող, ինչպես նաև հաջորդող տեքստերի վրա, «և հենց իր այս տարերքի մեջ տեքստը կրում է անցյալի և ապագայի մշակույթների էությունը...»³:

Հինարևելյան քաղաքակրթություններում ցորենի ցանքսն ու աճեցումը խորհրդանշում են աստվածային անձի թաղումն ու հարությունը⁴: Եգիպտական Օսիրիսը, բաբելական Թամուզը, փյունիկյան Ադոնիսը, փոյուգիական Ատտիսը հացի, հատկապես հացահատիկի (ցորեն, գարի և այլն) մեռնող-հառնող բուսական աստվածություններ են: Կ.Գ. Յունգի դիտարկմամբ՝ «Այն ինչ մենք անվանում ենք խորհրդանիշ, կարող է լինել առօրյա կյանքում մեզ ծանոթ եզրույթ, անուն կամ պատկեր, որն իր սովորական իմաստից բացի օժտված է առանձնահատուկ հավելյալ նշանակությամբ»⁵:

Հայկական ցորենի հանելուկաշարում ցորեն հացաբույսի հետ կատարվող արտադրական տարբեր գործընթացների բնական իրողությունները՝ հողում ցանելն ու բուսնելը, գերանդիով կամ մանգաղով հնձելը, կամով կալսելը, աղորիքով աղալը, կրակի մեջ եփելը ընկալվում են իբրև մարմնական անլուր տանջանքներ և հացի աստվածության սպանություն.

Ա. Թուրով թրատեցին գիս, / Սուրով սրատեցին գիս, /

Մեռա ես, կորա ես / Առջի տարին ելա ես (Ղրիմ, Խոտորջուր):

Բ. Սաղ էր՝ մեռավ, / Էլըմ (դարձյալ) սաղացավ, /

Սուրով կտրեցավ, / Քյար-քյարի վրեն կռճվեցավ (աղալ),

Մտավ տըժյոխը, / Էլավ մեր խուզիվ (հոգի) ճար (Վան)⁶ և այլն:

Ըստ Ղափանցյանի՝ Արան գարնան խորհրդանիշն է, նոր բուսականության, ցորենի մեռնող (տանջվող) և հարություն առնող աստվածության տեղական արտահայտությունը, ինչը հետագայում հանդես է գալիս Սուրբ Սարգսի կերպարում՝ քրիստոնեական դիմակի տակ⁷:

Ա. Լոսևի կարծիքով՝ «Յուրաքանչյուր նշան ինչ-որ բան է նշանակում, կամ ինքն իրեն է ցույց տալիս, կամ մեկ այլ բան: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր նշան ունի մեկ կամ մի քանի իմաստներ»⁸: Հացի ճաշակումը համադրվում է պատարագի ժամանակ Քրիստոսի սուրբ հաղորդության ճաշակման հետ,

² Աճառյան 1973, 454, 547-548:

³ Бахтин 1979, 58.

⁴ Ֆրեզեր 1989, 361:

⁵ Юнг 1991, 25.

⁶ Հարությունյան 1965, 48:

⁷ Ղափանցյան 1944, 63, 155-158:

⁸ Лосев 1982, 62.

որը վկայում է, որ խոսքը ծիսական հացի մասին է⁹, «քանզի Քրիստոսն ինքը ևս պատկանում է մեռնող-հառնող-տառապող աստվածների խմբին»¹⁰:

Ժողովրդական-երկրագործական տոնացույցը

Այս տոնացույցը դիտվում է որպես մարդկանց տնտեսական-արտադրական հարաբերությունների կրոնածիսական արտացոլում և, ըստ այդմ, դասակարգվում է երկու փուլով.

1. տնտեսական տարվա նախապատրաստմանը, ցանքին և բերքաճին նվիրված տոներ ու ծեսեր, որոնց բնորոշ են տնտեսական տարվա բարեհաջողությունն ապահովելուն նվիրված ծիսական արարողությունները և բերքի աճին աջակցելու հմայական միտումը,

2. բերքահավաքին նվիրված տոներ ու ծեսեր, որոնք համապատասխանում են տնտեսական տարվա արդյունքների ամփոփմանը¹¹:

Այս ամենն ակնառու է հատկապես տարվա չորս եղանակներով պայմանավորված երկրագործական տոներում (Նոր տարի-Նավասարդ-Ամանոր, Սուրբ Սարգիս, Տյառնընդառաջ, Բարեկենդան, Ծաղկազարդ, Զատիկ, Համբարձում, Վարդավառ): Ամանորի տոնակատարությունը կապված է երկրագործական տոնացույցի առաջին փուլի հետ, քանի որ հայկական ամիսների ցուցակում *Նավասարդ* կոչվում է առաջին ամիսը, որը, սակայն, միշտ որոշակի ամսվա անուն չի եղել: Ամանորը թափառիկ էր: Նավասարդ (Ամանոր) անունը կրում էր այն ամիսը, որի հետ համընկնում էր Նոր տարին: Գարնանային օրահավասարով սկսվում էր ամբողջ տարվա բարեկեցությունը պայմանավորող տնտեսական Նոր տարին, որը զուգակշիռ էր հռոմեական մարտ ամսին, իսկ աշնանային օրահավասարով՝ բերքահավաքով, փակվում էր այն¹²: Այդ պատճառով էլ Ամանորին բնորոշ են, մի կողմից, բնության զարթոնքի և նոր սկսվող տնտեսական տարվա բարեհաջողությունն ապահովելուն նվիրված ծեսերը, մյուս կողմից՝ բերքահավաքին նվիրված տոներն ու ծեսերը:

Ցանքի նախապատրաստում

Երկրագործական տոնացույցը սկսվում էր ցանքի նախապատրաստությունից: «Փետրվար ամիսն իր երկու տոներով՝ Սուրբ Սարգսով և Տյառնընդառաջով ամբողջապես նախացանքսի տոներն էին, որոնք մեռած բնությանը կյանքի կոչելու գործողություններ էին ծավալում»¹³,՝ ճիշտ այնպես,

⁹ Հարությունյան 2000, 359:

¹⁰ Հարությունյան 2000, 359:

¹¹ Օդաբաշյան 1978, 8:

¹² Օդաբաշյան 1978, 11:

¹³ Բրդյան 1972, 447:

ինչպես աղի բլիթ ուտելով և երազում ծարավը հագեցնելով շեշտվում էին երիտասարդների սիրո տենչանքներն ու ամուսնության գաղափարը:

Ս. Սարգսին նվիրված չափածո աղոթքներում սուրբը զուգորդվում է ամպրոպային հատկանիշներով բնորոշվող հերոսների հետ.

-Իմ անունս՝ Սուրբ Սարգիս, / Օրդուս անունը՝ Սուրբ Մարտիրոս, /

Ձիս կը թալե ամպի վերան, / Անթաթար ծովի վերան/¹⁴:

Ըստ այդմ, ս. Սարգիսն օժտված է ամպրոպ, կարկուտ, բուք ու բորան առաջացնելու, ինչպես նաև այդ ամենը դադարեցնելու երկակի գործառույթներով: Իսկ ս. Սարգսի տոնն ու դրան առնչվող ծիսական արարողությունը կատարվել է փետրվարին, տարվա մի ժամանակաշրջանում, որին բնորոշ են ձնաբքի և մրրիկների առատությունը: Այս պարագայում միանգամայն հասկանալի է դառնում ս. Սարգսի անվան առնչակցությունը նախացանքսի հետ, քանի որ, ժողովրդական պատկերացումների համաձայն, որպեսզի կարկուտը դադարի, մի ծերունի կամ պառավ պետք է ամեն կողմ շաղ տա այն ծիսական փոխինդը, որի ցորենը խարկվել և աղացվել է ս. Սարգսի տոնի ժամանակ¹⁵:

Բանավոր ավանդության համաձայն՝ ս. Սարգիսը, Ուլիանոս թագավորի դեմ կռվելուց հետո, մի շաբաթ քաղցած մնալով՝ մտածում է, թե որտեղից մի կտոր հաց գտնի: Այդ պահին ուժեղ քամի է բարձրանում, և նա, երկնքից ընկած ցորենի հասկերը փշրելով, ուտում է¹⁶: Պատճառաբանական այս ավանդագրույցը բացահայտում է ս. Սարգսի կապը հացաբույսերի, մասնավորապես ցորենից պատրաստված փոխինդի հետ, որը համարվում է ս. Սարգսի տոնի ծիսական կերակուրը: Ավանդությունը պահպանել է ս. Սարգսին նվիրված աղոթքի հատուկ բանաձև. «Մեռնիմ քի, ատենահաս բոզ ծիավոր սըփ Սարգիս, դու կգաս քու ծիու ոտ զարկիս մեջ»¹⁷: Ս. Սարգսի չորեքշաբթի օրը ամեն տան մեջ աղանձ էին անում, փոխինդը շաղախում խաղողահյութով կամ մեղրաջրով և այդ անուշեղենից մի-մի կտոր տալիս էին տնեցիներից յուրաքանչյուրին՝ օրհնելով. «Սուրբ Սարգիսը քեզ պահապան լինի»¹⁸:

Տյառնընդառաջը կամ Տրնդեզը ս. Սարգսի տոնի շարունակությունն է: Տյառնընդառաջը կրակի պաշտամունքից մնացած տոն է, որի հիմնական ծեսը խարույկ վառելն էր, որով մայր հողը «վերակենդանացնում» էին երկարատև ձմեռվանից հետո:

¹⁴ Հարությունյան 2006, 202:

¹⁵ Լալան 1897ա, 243:

¹⁶ Ղանալանյան 1969, 366:

¹⁷ Յովսեփեանց 1893, 67:

¹⁸ Խառատյան-Առաքելյան 2005, 66:

Հայաստանի համարյա բոլոր ազգագրական շրջաններում փետրվարի վերջին օրվա երեկոյան ժողովուրդը շվոտ ոգիներին դուրս անելու հատուկ ծես էր կատարում՝ բարձրաձայն կրկնելով. «Շվոտը դուրս, մարտը ներս»¹⁹: Այս ասացվածքը «գործ է ածել հայ գյուղացին՝ ձմռանը ճանապարհելու և գարնանը դիմավորելու առիթով»²⁰:

Շվոտին դուրս անելով և նրան նվիրված զոհաբերական բնույթի նույնա-նուն հաց թխելով՝ ցանկացել են խափանել գարնան մոտենալու հետ հացի պակասող պաշարների վրա այդ ոգու բացասական ներգործության հնա-րավորությունը²¹:

Տէրընդեզ՝ դարմանը կես, / Առ հաց ու կես, ելի գեղես, /

Տերընդեզ, մխի (ծխի) դին (կողմը) տես, / Մէ փութ ցանես՝ հարյուր քաղես²²:

«Ծաղկազարդը Մեծ պասի նախավերջին կիրակնօրյա տոնն էր: Այդ օր-վա նրա ծիսական արարողությունների մեծ մասը նվիրված էր գարնան զարթոնքին, ցանքի նախապատրաստություններին: Տներում կարկաջա²³ ածող երեխաներին ձվեր ու հատիկներ էին նվիրում²⁴: Ծաղկազարդին չա-մուսնացած երիտասարդները ուռենու օրհնած ճյուղերը դնում էին ցորենի շտեմարանները, որ հացն առատ լինի²⁵: Ծաղկազարդի շաբաթ օրը երգում էին.

Կանաչ են սար ու ձորեր: / Ձմեռն անցավ, գարունն եկավ, /

Պասը գնաց, ուտիսն եկավ, / Քաշվի, կորի, Ջատիկն եկավ²⁶:

Ժողովրդական երգերի, բարեմաղթանքների ամենամեծ բաժինն ուղղված է Ջատիկին՝ իբրև բնության զարթոնքի առանձնահատուկ տոնի.

Բյուրապատի՛կ, բյուրն պատիկ, / Ոսկե հատիկ ցորեն բշիկ, /

Տա Աստված հազար Ջատիկ, / Դուք լավ լինեք, շեն լինեք... /

Տեր, թոն արա, թոն, թոն արա, / Գարի հացը բոլ-բոլ արա²⁷:

Վանում Համբարձման տոնին Վիճակ կոչված տիկնիսի անունից երգում էին.

Տեսե՛յք Վիճակ ի՞նչ կանի, / Սրտի ուզածն ի՞նչ կուզի.

Խորերով ցորեն կուզի/Առտերով գեարի կուզի, /Ջան, Վիճակ ջան²⁸:

«Համեմատական ազգագրությունից հայտնի է, որ գարնանային օրա-հավասարով նոր տարին սկսող ժողովուրդների մեջ նոր տարվա տոնա-կատարությունները համընկնում էին բնության զարթոնքի պաշտամունքին

¹⁹ Բենսէ 1900,9:

²⁰ Ղանալանյան 1960, XXI:

²¹ Օդաբաշյան 1978, 36:

²² Հակոբյան 1974, 233:

²³ Կարկաջա կամ կարկաջա - մեջը մանր քարեր լցրած կոթավոր տուփիկ, որ շարժելուց չխկնկոց է հանում, Աղայան 1976:

²⁴ Բդոյան 1974, 193:

²⁵ Լալաեան 1903, 260:

²⁶ Խառատյան-Առաքելյան 2005, 132:

²⁷ Խառատյան-Առաքելյան 2005, 132:

²⁸ Շէրենց 1885, 87:

նվիրված ծիսական արարողություններին»²⁹: Տոնի ծիսախորհրդանշանային իմաստաբանությամբ՝ Բարեկենդանը արթնացող բնության ու նոր տնտեսական տարվա սկիզբն էր:

Ամանորի ծիսական բանահյուսությունն ուղեկցվում է զոհաբերական և հմայական բնույթով: Նոր տարվա նախորդ գիշերը երիտասարդները, ակիշ, շիշ ու խաչերկաթ հեծած, մի կուժ ցորեն կամ գարի են տանում լցնում գետը և ասում.

Քեզի կուտամ ցորեն, գարի, /Դուն ա ինձի տու բարի, /Շնորհավոր Նոր տարի³⁰:

Հետո հավատալով, որ ջուրը ոսկի է դառնալու, կուժը լցնում էին ջրով և տուն վազում՝ բացականչելով. «Տղաք, քաշեք, ոսկի լցվավ»: Նրանք վազում էին՝ առանց հետ նայելու, որպեսզի չպատուհասվեն սատանաներից: Տանը նրանց դիմավորողները դատարկում էին ջուրը՝ տեսնելու ոսկի կա՞, թե՞ ոչ³¹:

Ըստ բնապաշտական ըմբռնումների՝ հմայական գործողություններով հնարավոր էր Նոր տարվա սկզբին մարդուց հեռացնել չարը, փորձանքը, աղքատությունը և հակառակը՝ ապահովել հաջողությունը, առատությունը³², որն իր արտացոլումն է ստացել Նոր տարվա «Ավետիս» կամ «Ալելուիա» հանգերգերում.

Հաց հունցեցեք, ուրախացեք, հալիլիվա, /Թե քնած եք վեր զարթնեցեք, հալիլիվա³³:

Տուն ու երդիք լիքն են շարքով, /Բարով կաղանդ, բարկարևով ալելա³⁴:

Նոր տարվա նախորդ օրը Բարձր Հայքում, Շիրակում, Ջավախքում, Լոռիում և այլուր թխում էին աստղալից երկինքը պատկերող ծիսական մարդակերպ և կենդանակերպ հացեր (Տարի, Տարի հաց, Կլոճ, Կրկենի, Կաղանդի հաց), որոնք խորհրդանշում էին տոմարի և օրացույցի հետ կապված երկրագործի տարին, որոնց ուռչելու աստիճանից որոշում էին տարվա հաջողության աստիճանը³⁵:

Ցանքի կատարում, խնամք և բերքաճ

Ինչպես ցանքի նախապատրաստության, այնպես էլ կատարելու, խնամքի և բերքաճի ընթացքում կիրառվում էին հմայական բազմապիսի գործողություններ, ծիսական բանաձևեր, որոնք սահմանված են ժողովրդա-

²⁹ Օդաբաշյան 1978, 27:

³⁰ Լալաեան 1897թ, 247:

³¹ Լալաեան 1897թ, 247:

³² Օդաբաշյան 1978, 61:

³³ Օդաբաշյան 1978, 69:

³⁴ Պոդոսեան 1952, 32:

³⁵ Մխիթարեանց 1901, 261:

կան ավանդություններով և ամրապնդված կրոնական արարողություններով (զոհաբերություն, աղոթք և այլն):

Հատիկը հողը գցելիս նախապես զոհաբերություն էին կատարում վնասատուների համար. «Էս մեկը ագռավի փայ, էս մեկը դուշի փայ, էս մեկը մկան փայ³⁶»: Հատիկը ցանելիս խնդրում էին առատություն. «Մեկը ցանեմ, հազարը քաղեմ³⁷»:

Վարուցանքը սկսվում էր վաղ առավոտյան՝ կեսօրի կիզից արևից խուսափելու համար.

Վեր կաց հավախոսին, / Գութանն ա վարում փոսին,

Բարկ արևը երկնքում, / Շողն ա դիպել ակոսին³⁸:

Ցանքին և բերքածին նվիրված ծեսերին բնորոշ է բերքի աճին աջակցելու հմայական միտումը: Հորովելներում հիշատակվող անորոշ պառավը հաճախ մայր-մաճկալի զուգահեռն է, որը գութանահերկի ժամանակ գաղտնի այցելում է հոտաղներին, նրանց օժտում սիրային-պտղաբերական զգացումով.

Էրկու պառավ էկան Խլաթա, / Էրեսնուց արուն կը կաթա /

Ըրին մաճկըվորին ճըմուռ ու գաթա³⁹:

Հայկական գութաներգերում վարող առաջին գործիքը և առաջին վարուցանքը Աստծու պարզևն է, գութանը՝ սրբազան գործիք.

Վարենք, վարի տարին ա, / Գութանն Աստծու շարին ա⁴⁰:

Իսկ լծկանի վզից կախված գինդերը, դաղդաղաները, հեթանոս հողագործների մեջքերին, պարանոցներին, ականջներին կրած առարկաները հմայական ու չարխափան նշաններ էին՝ հողի մեջ թաքնված չար ուժերին վանելու համար.

...Չարն անցավ, վարն անցավ, / Օրհնյալ է Աստված...,

Վարենք կանանչի..., / Չարը փախչի, փախչի...⁴¹:

Մաճկալն է կայնե մաճին, / Ոսկի օղերն ականջին⁴²:

Խոսելով նշանի երևակայության մասին՝ Ռոլան Բարտը առանձնացնում է ցանկացած նշանի երեք տեսակի հարաբերություններ՝ խորհրդանշանային (symbolique), հարացույցային (paradigmatique) և շարույթային (relation syntagmatique): Առաջին տեսակը ներքին հարաբերություն է, սովորաբար հստակորեն ի հայտ է գալիս խորհրդանշի մեջ և նշանակիչը համակցում է (signifiant) իր նշանակյալին (signifie)⁴³: Այս հարաբերության մեջ առաջնու-

³⁶ Կիրակոսյան, 2017 (չիրատարակված), Արարատի մարզ, Ավշար:

³⁷ Կիրակոսյան, 2018 (չիրատարակված), Կոտայքի մարզ, Գեղաշեն:

³⁸ Աբեղյան 1940, 25:

³⁹ Բդոյան 1972, 469:

⁴⁰ Լալաեան 1904, 70:

⁴¹ Բդոյան 1972, 482:

⁴² Աբեղյան 1940, 26:

⁴³ Բարտ <https://granish.org/nshani-erevakyutyuny/>

թյունը տրվում է նշանակյալին՝ նշանակիչը համարելով մշտապես որոշարկված: Նշանաբան Յուլիա Կրիստևայի պնդմամբ՝ բոլոր նշանները հավասարապես կարևոր են, նրանց միջև գոյություն ունի փոխկապակցված հարաբերությունների շարք, և յուրաքանչյուր տեքստ մեկ ուրիշի կլանումն ու փոխակերպումն է⁴⁴: Ասվածը վերաբերում է մասնավորապես առասպելաբանական և բանահյուսական տեքստերին, որտեղ բացարձակապես գերիշխում է խորհրդանշանային գիտակցությունը:

Այս առումով բնորոշ է Այրարատից գրառված «Ֆալաք» վերնագրով հեքիաթը, որտեղ որդին մորը լծել է գութանին ու վար է անում. «Կտենա, հրես հանդումը, մի տղա իրա մորը մի եզան հեննա լծել ա գութանիցը, վար ա անում»⁴⁵:

Հայկական հեքիաթում գութանին լծված կինը համադրվում է Հունաստանում հասկի հասունացման աստվածուհի Դեմետրայի հետ, որը էլևսինի արքայորդի Տրիպտոլեմոսին ցորենի հասկ է ընծայում, պատանուն սովորեցնում է հողը մշակել և այն փոխանցել մարդկանց⁴⁶: Եզան հետ լծված կնոջ դիցաբանական տվյալը վկայում է, որ կինը պատմականորեն առաջին քաշող ուժն է արորի համար:

Օրինյալ է Աստված հոտաղներ, /Համենայն ժամ գութնամէր⁴⁷:

Վ. Բդոյանը հենց կնոջ մաճկալ լինելու հանգամանքով է բացատրում «գութնամէր» բառի ծագումը: Այս տեսակետից հետաքրքիր է ծիսական վարը, երբ Հայաստանում երաշտի ժամանակ մի խումբ կանայք լծվում էին արորին և, անձրև բերելու ակնկալությամբ, վարում էին չորացած գետի հունը⁴⁸: Հետագայում տղամարդն է հանդես գալիս արորի դեկը ձեռքը պահողի դերում:

Առասպելի շարունակությունն առկա է «Սասնա ծռեր» էպոսում, որտեղ Դավթի հորեղբայր Շղթա կտրողը Դավթին արոր է հանձնում և վարել սովորեցնում: Դավիթը արձակում եզներին և ինքն է լծվում գութանին:

Տավիթ հերկեց, հերկեց, /Կնաց, էլավ Բառվու արդի մեջ⁴⁹:

Տրիպտոլեմոսի հետ համադրվող Դավիթը նույնպես հողամշակությունը տարածում է Սասնա հարևան գավառներում:

Դիտարկելով սերմը հողին պահ տալու ներփակ-ցիկլային առասպելաբանական գիտակցությունը՝ Յու. Լոտմանը գրում է. «Տարեկան ցիկլը նման

⁴⁴ Kristeva 1990, 23-25.

⁴⁵ Հայ ժողովրդական հեքիաթներ 1959, 318:

⁴⁶ Բոտվիննիկ և այլք 1985, 57-58:

⁴⁷ Լալաեան 1904, 70:

⁴⁸ Բդոյան 1972, 467, Հայրապետյան 2004, 216-227:

⁴⁹ Սասնա ծռեր 1944, 213-214:

է օրականին, մարդկային կյանքը՝ բուսականին, ծնվելու-մեռնելու, վերածնվելու կարգը գերիշխում է ամենի վրա»⁵⁰:

Բերքահավաք

Նավասարդը տնտեսական տարվա ավարտն էր, օգոստոսյան Նավասարդ-ամանորը⁵¹: Բերքահավաքը և աշնանացանը որոշ վայրերում զուգահեռիպում էին Նավասարդին:

Հայոց մեջ պահպանել են երկրագործության հետ սերտորեն կապված եզան պաշտամունքի մնացուկները⁵²: Հացը համարվում էր եզան վաստակ.

Եա՛ հաց, հացի հրեշտակ, /Արդար եզան վաստակ,

Դու բարեխօս էղնիս առ Աստուած, / Օր գայ մզի ամեն աւուր հաց,

Մենք լէ տանք աղքտներուն, անճարներուն. /Օր վարձք էղնի մըր հոգուն⁵³:

Վարդավառի տոնակատարությունը կամ նախորդում կամ համընկնում էր բերքի տոնին: Վարդավառը տոնվում էր հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին, երբ դաշտերում ցորենը հասունացած էր.

Ցորեն եմ ցանել ծորին, /Կը քաղեմ վարդիվորին,

Գլուխս դուրբան կանեմ /Բայագդա ծիավորին⁵⁴:

Տոնի կերակուրը հարիսան էր: Արտերում հունձը վերջացնելուց հետո խաչբուռ⁵⁵ էին պատրաստում և որպես օրվա գլխավոր զարդ ու խորհրդանիշ՝ այն դնում էին ցորենի կամ ալյուրի ամբարի վրա և պահում մինչև հաջորդ Վարդավառ⁵⁶:

Բերքի տոն

«Հեթանոս հայերի պատկերացումների համաձայն՝ մշակված հողերի բերքը գտնվում էր Վանատուր աստծու հովանավորության տակ: Բազավանում Նավասարդի մեկից մինչև վեցը տևող բերքի տոնին մասնակցում էին Հայաստանի բոլոր գավառներից հավաքված ուխտավորներ»⁵⁷: Ժողովրդի նյութական բարիքների արտադրությանը նվիրված երկրագործական այս տոնն այնքան կարևոր էր, որ թագավորներն իրենց մասնակցությամբ պատվում էին այն: Տիգրան Երրորդի հրամանով Բազավանում ուխտավորների համար իջևանատներ ու հյուրանոցներ էին կառուցում⁵⁸՝ մա-

⁵⁰ Լուսման 2012, 28:

⁵¹ Բդոյան 1972, 195:

⁵² Մելիք-Փաշայան 1963, 99-100:

⁵³ Հայկունի 1906, 298:

⁵⁴ Աբեղյան 1940, 452:

⁵⁵ Ցորենի հասկերով կազմած խաչածև փունջ:

⁵⁶ Խառատյան-Առաքելյան 2005, 204:

⁵⁷ Բդոյան 1974, 213:

⁵⁸ Խորենացի 1981, 244:

կանախաղերի, ձիարշավների, կառարշավների և կենդանակռիվների մրցությունները պատշաճ անցկացնելու համար: Տոնի արձագանքները իրենց արտահայտությունն են ստացել հայ ժողովրդական բանահյուսության մեջ՝ հեքիաթներում, «Սասնա ծռեր» հերոսավեպում, առասպելներում և վիպական մեծ ու փոքր ժանրերում:

Եզրակացություններ

Մարդու երկրագործական գործունեության ընթացքում ձևավորվում և զարգանում է տարվա չորս եղանակներով, տնտեսական տարվա ցանքով, բերքաճով և բերքահավաքով պայմանավորված ամբողջական կրոնաբարոյական աշխարհայացք, որն իր արտահայտությունն է ստանում ծեսերով, արարողություններով, սովորույթներով ու ծիսական բանահյուսությամբ հագեցած ժողովրդական-երկրագործական տոնացույցում:

Ժողովրդական տոնացույցի բանահյուսության ուսումնասիրությունը ուշագրավ է ոչ միայն առանձին տոների տեղի ու դիրքի հստակեցման առումով, այլև երկրագործական ամբողջական տարեպտույտում (ցիկլ) հացի դերի բացարձակ գերակայությամբ:

Հայոց ծիսական բանահյուսության մեջ հացի հետ կապված սովորույթներն ունեն պաշտամունքային բովանդակություն, որոնք, հիմնվելով խոսքի կամ գործողության հմայական զորության հավատալիքի վրա, համադրվում են արարման առասպելի հետ:

Գրականություն

- Աբեղյան Մ.Խ. 1940, Ժողովրդական խաղիկներ: Գյուղական փոքր յերգեր իրենց փոփոխականներով, մասնակի աշխատակցությամբ Կոմիտասի, Երևան, «Հայպետհրատ», 584 էջ:
- Աղայան Է.Բ. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, «Հայաստան», 1642 էջ:
- Աճառյան Հ.Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 688 էջ:
- Բարտ Ռ. Ժ. 1991, Նշանի երևակայությունը, Գրանիշ, <https://granish.org/nshani-erevakutyuny/>, թարգմանությունը ֆրանսերենից և ծանոթագրությունները՝ Թոնդրակի: Թարգմանությունը կատարվել է ըստ՝ R. Barthes. Essais critiques. Paris: Seuil, p. 214-220 (ներբեռնման օրը՝ 20.04.2021):
- Բդոյան Վ.Հ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էջ:
- Բդոյան Վ.Հ. 1974, Հայ ազգագրություն: Համառոտ ուրվագիծ, Երևան, ԵՊՀ հրատ., 286 էջ:
- Բենսէ 1900, Բուլանըխ կամ Հարք գաւառ. Հաւատք. Ա. Բարի և չար հրեշտակներ, Ազգագրական հանդէս 2, Թիֆլիս, էջ 7-14:
- Բոտվիննիկ Մ.Ն., Կոզան Մ.Ա., Ռաբինովիչ Մ.Բ., Սելեցկի Բ.Պ. 1985, Դիցաբանական բառարան, Երևան, «Լույս», 264 էջ:

- Լալաեան Ե.Ա. 1897, Ա, Վարանդա, Սնոտիապաշտութիւններ, Ազգագրական հանդէս, Գիրք Բ, Թիֆլիս, 384 էջ+121 էջ:
- Լալաեան Ե.Ա. 1897, Ջավախք, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդէս, Գիրք Բ, Թիֆլիս, 384 էջ+121 էջ:
- Լալաեան Ե.Ա. 1903, Բորչալուի գավառ, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդէս X, Թիֆլիս, էջ 249-268:
- Լալաեան Ե.Ա. 1904, Բորչալուի գավառ, Երկրագործի երգեր, Ազգագրական հանդէս XI, Թիֆլիս, էջ 69-75:
- Լոտման Յու.Մ. 2012, Միֆ, անուն, մշակույթ, Թարգմանություն ուսուներնից, Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի», 344 էջ:
- Խառատյան-Առաքելյան Հ.Ս. 2005, Հայ ժողովրդական տոները, Երևան, «Ձանգակ-97», 208 էջ:
- Կիրակոսյան Ա.Ս. 2017 (չհրատարակված): Աղոթք, Արարատի մարզ, Ավշար:
- Կիրակոսյան Ա.Ս. 2018 (չհրատարակված): Օրինանք, Կոտայքի մարզ, Գեղաշեն:
- Հակոբյան Գ.Ա. 1974, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Երևան, «Հայաստան», 458 էջ:
- Հայ ժողովրդական հեքիաթներ 1959, հ. 2, հատորը պատրաստեց և առաջաբանը գրեց Ա.Մ. Նազինյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 660 էջ:
- Հայկունի Ս.Գ. 1906, ժողովրդական երգ, առած, ասած, հանելուկ և այլն այլ և այլ բարբառներով, ԺԱ. Աղոթքներ, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. 2, Մոսկուա-Վաղարշապատ, էջ 297-306:
- Հարությունյան Ս.Բ. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, «Համագգային», 528 էջ:
- Հարությունյան Ս.Բ. 1965, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 390 էջ:
- Հարությունյան Ս.Բ. 2006, Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, ԵՊՀ հրատ., 504 էջ:
- Հայրապետյան Թ.Լ. 2004 Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, Պատմաբանասիրական հանդես, N 3, էջ 217-227:
- Ղանալանյան Ա.Ս. 1960, Առածանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 396 էջ:
- Ղանալանյան Ա.Ս. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 530 էջ:
- Ղափանցյան Գ.Ա. 1944, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 182 էջ:
- Մելիք-Փաշայան Կ.Վ. 1963, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ, 164 էջ:
- Մխիթարեանց Ա. 1901, Փշրանքներ Շիրակի ամբարներից, Տարուայ նշանաւոր տօները, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Մոսկուա-Ալեքսանդրապոլ, էջ 261-274:
- Մովսես Խորենացի 1981, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և մեկնաբանությունները՝ Ստ. Մախապանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 589 էջ:
- Յովսեփեանց Գ. սրկ. 1893, Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից, ժողովեց Գարեգին սարկավագ Յովսեփեանց, Թիֆլիս, տպարան Մ. Շարաձէ, 152 էջ:
- Շերենց Գ. 1885, Վանայ սազ հավաքածոյք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքեաթների, առածների և հանելուկների (տեղական բարբառով), առաջին մաս, ժողովեց Գեորգ Գ. Շերենց, Թիֆլիս, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, 189 էջ:
- Պողոսեան Ե.Հ. 1952, Նոր տարւոյ տօնը հին եւ նոր հայոց քով, քննական ուսումնասիրութիւն, Վիեննա, տպ. Մխիթարեան, 160 էջ:

- Սասնա ծռեր 1944, հատոր Բ, առաջին մաս, խմբագրեց ակադեմիկոս Մ. Աբեղյան, աշխատասիրությամբ՝ պրոֆեսոր Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Պետհրատ., 406 էջ:
- Օդաբաշյան Ա.Ա. 1978, Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, Նյույթեր և ուսումնասիրություններ, հ. 9, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 7-72:
- Ֆրեզեր Զ.Զ. 1989, Ոսկե ճյուղը. մոգության և կրոնի ուսումնասիրություն, Երևան, «Հաստան», 880 էջ:
- Бахтин М.М. 1979, Эстетика словесного творчества, Москва, «Искусство», 424 с.
- Лосев А.Ф. 1982, Знак, символ, миф, Труды по языкознанию, Москва, изд. Московского университета, 479 с.
- Юнг К.Г. 1991, Архетип и символ, Москва, «Ренессанс», 300 с.
- Kristeva Y. S. 1990, Desire in Language: A Semiotic Approach to Literature and Art, New York, Columbia University Press, 305 p.

ՀԱՅՐ ՀԱՅՈՑ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑԻ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ալինա Կիրակոսյան

Ամփոփում

Երկրագործ մարդն իր գործունեության ողջ ընթացքում ծեսերով, արարողություններով և սովորույթներով ծիսական բանահյուսության մեջ ձևավորել և զարգացրել է տարվա եղանակներով պայմանավորված հստակ կրոնաբարոյական աշխարհայացք: Ժողովրդական տոնացույցի բանահյուսության ուսումնասիրության շնորհիվ որոշարկվում է առանձին տոների տեղն ու դիրքը. ուշագրավ է, որ երկրագործական ամբողջական տարեպտույտում (ցիկլ) ընդգծվում է հացի բացահայտ դերը: Հացի հետ կապված սովորույթները ծիսական բանահյուսության մեջ ունեն պաշտամունքային նշանակություն, որոնք, հիմնվելով խոսքի կամ գործողության հմայական զորության հավատալիքի վրա, զուգորդվում են արարման առասպելին:

Բանալի բառեր՝ բանահյուսություն, ցորեն, ծես, խորհրդանիշ, հաց, տոնացույց, ոգի:

ХЛЕБ В ОБРЯДОВОМ ФОЛЬКЛОРЕ АРМЯНСКОГО ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКОГО КАЛЕНДАРЯ

Алина Киракосян

Резюме

В процессе земледельческой деятельности человека формируется и развивается целостное религиозно-нравственное мировоззрение благодаря четырем временам года, что находит свое выражение в народно-земледель-

ческом календаре, содержащем данные об обрядах, церемониях, обычаях и обрядовом фольклоре. Изучение фольклора народного календаря примечательно не только с точки зрения выяснения места и значения отдельных праздников, но и абсолютного доминирования роли хлеба в полном земледельческом цикле. В армянском обрядовом фольклоре обычаи, связанные с хлебом, имеют культовое содержание, которое, основываясь на вере в магическую силу речи или действия, сочетается с мифом о сотворении.

Ключевые слова – фольклор, пшеница, обряд, символ, хлеб, календарь, дух.

SYMBOLIC MANIFESTATIONS OF BREAD IN THE ARMENIAN ORAL TRADITION

Alina Kirakosyan

Abstract

In the process of human agricultural activity, a holistic religious and moral worldview is formed and developed due to the four seasons, which is reflected in the national agricultural calendar, containing data on rituals, ceremonies, customs and folklore. The study of the folk calendar is remarkable not only from the point of view of clarifying the place and significance of individual holidays, but also the absolute dominance of the role of bread in the full agricultural cycle. In the Armenian ritual folklore, the customs associated with bread have a cultic content, which, based on the belief in the magical power of speech or action, is combined with the myth of creation.

Key words – folklore, wheat, ceremony, symbol, bread, calendar, spirit.